ԱՆՁԻՆ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նաիրա Ավետիսյան
ԵՊՀ իրավաբանական կլինիկայի փորձագետ

21-րդ դարն ու դրան նախորդած վերջին տասնամյակները շատ պետություններում պատմականորեն նշանավորվեցին մարդու իրավունքների առավելագույն պաշտպանության ապահովմանն ուղղված իրավական մեխանիզմների ներդրմամբ և դրանց կատարելագործմամբ՝ մարդու իրավունքների իրականացումն առավել արժևորելու ակտիվ ձգտումներով:

Ամբողջ աշխարհում գործող օրենսդրությունը, մարդուն ճանաչելով իրավունքի սուբյեկտ, այնուամենայնիվ տարբեր հասարակական հարաբերություններում վերջիններիս բազմաթիվ իրավունքների անարգել իրականացումը պայմանավորում են իրավունակության և գործունակության առկայությամբ: Անցնելով պատմական տարբեր շրջափուլերով՝ այս երկու կատեգորիաները՝ որպես քաղաքացիական հարաբերություններին անձի մասնակցությունն ապահովող միջոցներ, ունեցել են տարբեր առանձնահատկություններ և զարգացման տարբեր մակարդակներ: Եվ հենց այդ որակական բազմազանությունն էլ թույլ է տվել իրավագիտական մտքին վեր հանել այն ընդհանրությունները, որոնք հատկանշական են իրավասուբյեկտության յուրաքանչյուր բաղադրիչին բոլոր ժամանակներում:

Մասնագիտական գրականության մեջ անձի իրավունակությունն ընկալվում է որպես հասարակական կատեգորիա՝ հիմնավորմամբ, որ այն օրգանապես կապված է քաղաքացիության հետ, որպիսին յուրաքանչյուր պետություն ինքն է ճանաչում իր քաղաքացիների համար[1]: Մինչդեռ գործունակության բնորոշումները բազմազան են, և քննարկվելով տարբեր դիտանկյուններից՝ մի դեպքում ներկայացվում է որպես անձի իրավասություն և հնարավորություն՝ լինելու իրավունքի սուբյեկտ, կայացնելու վավեր որոշումներ ու գործարքներ[2], մեկ այլ դեպքում՝ անձի ազատություն և անկախություն՝ առանց երրորդ անձանց անհարկի միջամտության իր անձնական կյանքի վերաբերյալ ընտրություն կայացնելիս[3], երրորդ դեպքում՝ կարևորելով գործունակության իրավունքի ճանաչումը՝ բնորոշվում է որպես ինքնին անձի իրավունք և այլ իրավունքների իրականացման հիմք ու երաշխիք[4]:

Իրավունակության և գործունակության իրավական բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ քաղ. Օր.), ըստ որի՝

---

[1] Տե՛ս **Բարսեղյան Տ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (չորրորդ հրատարակություն), Երևան, 2014, էջ 89-90:
[2] Տե՛ս **Lewis, O**. Advancing Legal Capacity Jurisprudence , EHRLR, Issue 6, 2011, էջ 700:
[3] Տե՛ս **Nilsson, A.,** Right to Legal Capacity for Persons with Intellectual and Psychosocial Disabilities , Strasbourg, 2012:
[4] Տե՛ս **Մելքոնյան Ա**, Հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը ՀՀ-ում, Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան, էջ 8 www.osf.am/wp-content/uploads/2015/04/Araks_melqonyan-policy_paper.pd:

իրավունակությունն անձի քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է, որը բոլոր քաղաքացիների համար ճանաչվելով հավասարապես՝ ծագում է ծննդյան պահից և դադարում մահվամբ (հոդված 20): Գործունակությունը քաղաքացու՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու ունակությունն է, որը լրիվ ծավալով ծագում է 18 տարեկան դառնալու պահից (հոդված 24-ի 1-ին մաս):

Համեմատելով իրավասուբյեկտության այս երկու բաղադրիչների օրենսդրական ձևակերպումները՝ Տ. Բարսեղյանը գրում է. «Եթե իրավունակությունը քաղաքացու համար առաջանում է անկախ գործողություններ կատարելուց և սեփական կամքը դրսևորելուց, ապա գործունակությունը քաղաքացին ձեռք է բերում միայն այն պահից, երբ ի վիճակի է սեփական գործողություններով իր համար իրավունքներ ձեռք բերել կամ պարտավորություններ ստեղծել, հասկանալ դրանց իմաստը, կառավարել իր գործողությունները և կանխատեսել դրանց հետևանքները»[1]:

Իհարկե, ընդունելի է հեղինակի այն մեկնաբանությունը, որ իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու ունակությունն անձի մոտ լրիվ ծավալով հասունանում է 18 տարեկանից, սակայն միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ օրենսդիրը թվարկված հատկություններին չտիրապետող անձի մոտ գործունակության չառաջացման ինստիտուտ չի նախատեսում: Այսինքն, գործնականում յուրաքանչյուր ոք, ով հասել է չափահասության տարիքի, անկախ առողջական վիճակից ձեռք է բերում գործունակություն ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր ոք իրավունակություն է ձեռք բերում ծննդյան փաստի ուժով[2]: Ավելին, նույնիսկ այն դեպքերում, երբ անձն ի ծնե տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնք խոչընդոտում են վերջինիս կենսաբանական հասունացումն ու մտավոր զարգացումը և անձի մոտ չեն ձևավորվում բավարար գիտակցական ու կամային որակներ, այնուամենայնիվ 18 տարին լրանալու հիմքով վերջինս ձեռք է բերում գործունակություն, և նրա կողմից կատարված բոլոր գործարքները համարվում են վավեր, քանի դեռ անձը դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ չի ճանաչվել:

Վերոգրյալից մնում է եզրակացնել, որ *անձի մոտ լրիվ գործունակության* ***ծագման համար*** *առաջնային նախապայմանը օրենքով սահմանված տարիքի (18 տարեկան) հասնելն է: Մինչդեռ անձի հոգեկան առողջությունն ու դրանով պայմանավորված տարբեր իրավիճակներում համարժեք վարքագիծ դրսևորելու կարողությունն էական պայման են գործունակության <u>պահպանման համար</u>:*

Ներկայումս առավել ուշադրության պետք է արժանացնել գործունակության պահպանման հարցը, քանի որ, ի տարբերություն իրավունակության, գործունակության դադարման միակ հիմքը անձի մահը չէ:

Հայտնի է, որ օրենսդիրը նախատեսում է դատարանի վճռով անձին գործունակությունից զրկելու հնարավորություն, ինչը, սակայն, բուռն քննադատվել է ո-

---

[1] Տե՛ս **Բարսեղյան Տ.**, նշված աշխատություն, էջ 98:

[2] Գրականության մեջ քննադատության է արժանացել նաև իրավունակության առաջացումն ու դադարումն անձի ծննդյան և մահվան պահերով պայմանավորելու օրենսդրի մոտեցումը: (Այդ մասին առավել մանրամասն տես՝ **Айкянц А.М.,** Актуальные проблемы совершенствования частного права в Армении. Дис,.. д-ра юрид. наук, Ереван,2006:

լորտն ուսումնասիրողների կողմից: Որոշ իրավագետներ նույնիսկ այս ինստիտուտը կոչում են անձի «քաղաքացիական մահ»՝ ելնելով այն իրողությունից, որ լրիվ անգործունակ ճանաչված անձը զրկվում է հասարակական կյանքին առանց երրորդ անձի միջնորդության մասնակցելու հնարավորությունից[1]: Ի պաշտպանություն գործունակությունից զրկվող անձանց իրավունքների՝ օրենքը սահմանում է, որ քաղաքացու [...] գործունակությունը չի կարող սահմանափակվել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով (ՀՀ քաղ. օր. 25 հոդված): Իսկ թե որքանով են ներկայումս օրենքով սահմանված դեպքերն ու կարգը բխում անձի իրավունքների պաշտպանությունից, քննարկենք ստորև:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 31 հոդվածի՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Անգործունակ անձի նկատմամբ նշանակվում է խնամակալ, որը և գործարքներ է կնքում նրա անունից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածի (այսուհետ՝ ՀՀ քաղ.դատ.օր)՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի մեջ շարադրվում են այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսանում քաղաքացուն անգործունակ ճանաչելու համար: Ինչպես պարզ է դառնում ՀՀ քաղ. օր. 31-րդ հոդվածի ձևակերպումից, Հայաստանի Հանրապետությունում անձին գործունակությունից զրկելու միակ հիմքը իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու անկարողության հանգեցնող հոգեկան խանգարման առկայությունն է: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ օրենսդրի կողմից գործածված «հոգեկան խանգարում» հասկացությունը գործնականում ներառում է ինչպես հոգեկան, այնպես էլ մտավոր հիվանդությունները, որոնց տեսակների և ծանրության աստիճանների տարբերությունները վաղուց բացահայտված են բժշկական գիտություններում: Ավելին, վերջիններիս հավաստմամբ նույնիսկ միևնույն անձի մոտ հնարավոր են վիճակի փոփոխություններ՝ կախված վերականգման և ճգնաժամային փուլերից: Ուստի կամազրկող այս գործոնների բազմազանությունը օրենքում մեկ հասկացությամբ արտահայտելն ու դրանցով անձի գործունակությունը պայմանավորելը, կարծում ենք, ճիշտ մոտեցում չէ:

Թվում է, թե այս հարցն արդեն լուծվել է՝ նույն հոդվածում անձին գործունակությունից զրկելու չափանիշներ սահմանելով և որպես այդպիսին դիտարկելով *սեփական գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու անկարողությունը*: Սակայն հարկ է նկատել, որ օրենսդիրն այստեղ ևս առանց մասնավորեցման է թողել այն կարևորագույն հարցը, թե անձն իր ո՞ր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ ղեկավարելու ունակություն պետք է չունենա, որպեսզի զրկվի այնպիսի հիմնարար իրավունքից, ինչպիսին գործունակությունն է: Այս հարցի պատասխանն օրենսդիրն ակնկալում է ստանալ յուրաքանչյուր գործով նշանակված դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ (ՀՀ քաղ. դատ. օր. 252-րդ հոդված)՝ միևնույն ժամանակ դատավորին չթողնելով այլ ընտրություն, քան փորձագետին ուղղված որոշման մեջ քաղաքացիական օրենսգրքով

[1] Տե՛ս http://disabilityinfo.am/11916/:

սահմանված «անորոշ» հարցերը ձևակերպելը (արդյո՞ք քաղաքացին կարող է հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք): Առավել մտահոգիչն այն է, որ ըստ դատական գործերի ուսումնասիրության՝ Հայաստանի Հանրապետությունում անձն անգործունակ է ճանաչվում բացառապես դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա: Նույնիսկ այն դեպքերում, երբ դատարանն ուսումնասիրում է նաև դիմումատուի ու խնամակալության և հոգաբարձության մարմնի դիրքորոշումը, այնուամենայնիվ անձին անգործունակ ճանաչելու մասին որոշումն ուղղակիորեն հաստատում են դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության արդյունքները: Ուստի, հաշվի առնելով անձին անգործունակ ճանաչելու համար դիմողի հնարավոր շահագրգռվածությունն ու շահերի բախումը, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների ներկայացուցիչների կողմից դատահոգեբուժական փորձաքննության արդյունքների անշահարկելի ընդունումը, մեկ անգամ ևս համոզվում ենք, որ հարցի ներկայիս կարգավորումը հնարավոր չարաշահումների լուրջ ռիսկեր է պարունակում[1]: Եվ միայն այն պատճառով, որ գործող օրենսդրությունը չի առանձնացնում գործունակության տարբեր մակարդակներ, ուստի ներկայումս հոգեկան խանգարում ունեցող անձը ՀՀ-ում կա՛մ լրիվ գործունակ է, կա՛մ լրիվ անգործունակ:

Միանգամայն պարզ է, որ օրենսդրական առկա մոտեցումը դատարանի համար չի կարող ապահովել յուրաքանչյուր դեպքում անհատական մոտեցման հնարավորություն: Ուստի առաջարկում ենք *օրենքով խստագույնս սահմանափակել անձին գործունակությունից իսպառ զրկելու մոտեցումը և համակարծիք ենք այնպիսի մեխանիզմներ ներդնելու գաղափարին, որոնք հնարավորություն կտան պատշաճ գնահատել իր գործունակության իրավունքի իրացման կապակցությամբ՝ հոգեկան խանգարում ունեցող անձի իրական հնարավորություններն ու կարիքները և կիրառել դրանց համարժեք և անձնական կյանքի նվազ սահմանափակումներ նախատեսող միջոցներ*[2]:

Ինչպես կնկատենք ներքոշարադրյալ հիմնավորումներում, ներկայացվող առաջարկի ընդունման համար անհրաժեշտ իրավական նախադրյալները սահմանված են և՛ ՀՀ Սահմանադրությամբ, և՛ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով:

Այսպես, ՀՀ Սահմանադրությունը հռչակում է բոլորի հավասարությունը օրենքի առջև (հոդված 28) և ի թիվս այլ հատկանիշների՝ արգելում խտրականությունը նաև հաշմանդամության հիմքով (հոդված 29): ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և **ծավալը,** լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ (հոդված 79): Ըստ ՀՀ կողմից վավերացված Քաղա-

[1] Տե՛ս օրինակ, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԱՆԴ/0600/02/13 գործով վճիռը, Անձին անգործունակ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/2468/02/13 գործով վճիռը:

[2] Ներկայումս այս մոտեցումը որոշ առանձնահատկություններով գործում է ԵՄ անդամ գրեթե բոլոր պետություններում: Եվրոպայում քիչ թվով պետություններ են շարունակում կիրառել գործունակության լրիվ սահմանափակում, մասնավորապես՝ Ռումինիան և Իռլանդիան:

քացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի՝[1] յուրաքանչյուր անձ, որտեղ էլ նա գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունք, որից շեղում կամ վերապահում կատարել չի թույլատրվում անգամ արտակարգ իրավիճակների պայմաններում (հոդված 16 և 4-ի մաս 2): Նույնաբովանդակ դրույթ է պարունակում նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիան[2] (այսուհետ՝ ՀՈՒԱԻԿ), ըստ որի՝ Անդամ պետությունները վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուր օրենքի առջև որպես անձ ճանաչման իրավունք ունեն (հոդված 12): Վերջինս, ըստ ՄԱԿ-ի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), մարդու իրավունքների հիմնարար սկզբունք է[3]:

Սրան զուգահեռ, ՀՀ Սահմանադրությունը հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթները մեկնաբանելիս ստիպում է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (հոդված 81, մաս 1): Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Իսկ որպես այդպիսին ձևավորված Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով անձին խնամակալից կախվածության մեջ դնելը դիտել է դիմումատուի անձնական կյանքի բոլոր բնագավառներին լուրջ և անհամաչափ միջամտություն և համարել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 8-րդ հոդվածի խախտում[4], քանի որ այդ հոդվածն անձնական կյանքի իրավունքը սահմանափակել թույլատրում է բացառապես օրենքով նախատեսված դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ազգային անվտանգության, հասարակական անվտանգության կամ տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների և հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակներով: Ուստի վերոգրյալի լույսի ներքո յուրաքանչյուր դեպքում անձին գործունակությունից լրիվ զրկելն իսկապես վերջինիս անձնական կյանքի իրավունքի նկատմամբ լուրջ միջամտություն է, եթե չի հիմնավորվել, որ դա անհրաժեշտ է հիշյալ արժեքների պաշտպանության իրականացման համար:

Կարծում ենք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հոգեկան խանգարում ունեցող անձի գործունակության մասնակի սահմանափակման հնարավորության առկայությունն այս ինստիտուտն օբյեկտիվորեն համահունչ կդարձնի նաև դրա սահ-

---

[1] Ընդունվել է 26 մարտի, 1967թ., ուժի մեջ է մտել 23 մարտի, 1976թ., Հայաստանը վավերացրել է 23 հունիսի, 1993թ. www.un.am/hy/p/iii-un-treaties-and-armenia:

[2] https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtdsg_no=IV-15&chapter=4&lang=en:

[3] Տե՛ս Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն, թիվ 1(General Comment 1), https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement:

[4] Տե՛ս https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":["\"CASE OF SHTUKATUROV v. RUSSIA:

մանման նպատակին: Ու թեև վերոնշյալ իրավական ակտում ուղղակիորեն սահմանված չէ անձի գործունակության իրավունքի սահմանափակման նպատակը, սակայն դատելով խնամակալության ու հոգաբարձության հարաբերությունները կարգավորող նորմերի ընդհանուր վերլուծությունից՝ կարելի է պնդել, որ այս ինստիտուտը նախատեսված է բացառապես անգործունակ ճանաչվող անձի իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովման նպատակով: Մինչդեռ հաճախ ցավով նկատում ենք, որ սահմանված դրույթների նպատակները ներկայումս ոչ միայն չեն իրագործվում պրակտիկայում, այլ նաև կարող են կործանարար ազդեցություն ունենալ հոգեկան խանգարում ունեցող անձանց անձնական և ընտանեկան կյանքի վրա: Բանն այն է, որ ինչպես փաստում են ոլորտում կատարված ուսումնասիրությունները, քաղաքացիները հաճախ գործունակությունից զրկվում են զանազան սոցիալական խնդիրների, ներառյալ՝ անշարժ գույքի, նպաստի և այլ գույքային խնդիրների լուծման նպատակով: Այսինքն, անձի ընտանիքի անդամները դիմում են դատարան, որպեսզի հետագայում պաշտոնապես դառնալով տվյալ անձի խնամակալը՝ կարողանան իրականացնել անգործունակ ճանաչված անձի սեփականության հետ կապված համապատասխան գործողություններ, և վերջինիս սեփականությունը քաղաքացիաիրավական շրջանառությունից դուրս չթողնեն[1]: Միանգամայն պարզ է, որ նմանատիպ իրավիճակներում անձին գործունակությունից զրկելու ինստիտուտը ոչ միայն չի ծառայի ցանկալի նպատակին, այլ նաև անձնական կյանքի տարբեր ոլորտներում կարող է հանգեցնել իրավունքների ոտնահարման: Որպես օրինակ բավարար է մատնանշել ՀՀ ընտանեկան օրենսգրքի իրավակարգավորումները, որի 15-րդ հոդվածի հանաձայն՝ անգործունակ ճանաչված անձի ամուսինը կարող է միակողմանի լուծել ամուսնությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցումն իրականացնող մարմնում, իսկ 119-րդ հոդվածը թույլ է տալիս որդեգրել անգործունակ ճանաչված ծնողների երեխաներին՝ առանց վերջիններիս համաձայնությունը ստանալու: Ինչպես նկատում ենք, անձին անգործունակ ճանաչելու բացահայտված պրակտիկայի և վերը մեջբերված իրավադրույթների համադրությունը, մեղմ ասած, մտահոգիչ է, քանի որ նման դեպքերում սոցիալական խնդիրներից ելնելով՝ անգործունակ ճանաչված անձը ոչ միայն կորցնում է սեփական գույքի տնօրինման հնարավորությունը, այլ նաև կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ կարող է հայտնվել ընտանիքը կորցնելու լուրջ վտանգի և դրա դեմ պայքարելու անկարողության վիճակում:

Ահա նմանատիպ իրավիճակների հավանականությունն է, որ ստիպում է մտածել, թե օրենսդիրն անձի ո՞ր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ ղեկավարելու անընդունակությունն է որոշիչ համարել՝ վերջինիս՝ սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների ձեռքբերմանն ու դրանց կատարմանն անընդունակ համարելու համար, և այդ հանգամանքն օգտագործելով՝ արդարացի լուծում համարել հոգեկան խանգարում ունեցող անձի գործունակության լրիվ սահմանափակումն ու նրա մասնավոր կյանքին բազմասպեկտ միջամտությունը: Մինչդեռ *ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հոգեկան խանգարում ունեցող անձի գործունակության* ***մասնակի*** *սահմանափակման*

[1] Տե՛ս **Արման Զրվանդյան**, Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում, Երևան, 2014, էջ 95:

հնարավորության նախատեսումը կարող է հարցի լավագույն լուծումը լինել, քանի որ թույլ կտա խնամակալություն նշանակել խիստ որոշակի իրավաբանական նշանակության գործողություններ իրականացնելիս, որոնցից դուրս գտնվող հարաբերություններում անձը կպահպանի գործունակությունը և կգործի սեփական գիտակցությանն ու հայեցողությանը համապատասխան: Ինչ վերաբերում է գործունակության լրիվ սահմանափակմանը, ապա այն կկիրառվի մտավոր հիվանդություններով տառապողների կամ հոգեկան խանգարում ունեցող այն անձանց նկատմամբ, որոնց դեպքում գործունակության մասնակի սահմանափակման ինստիտուտն այլևս օգտակարություն ունենալ չի կարող:

Խնդրի լուծման առաջարկվող տարբերակը ոչ միայն թույլ կտա հնարավորինս ապահովել քաղաքացու անձնական կյանքի և այլ իրավունքների անհրաժեշտ պաշտպանություն, այլ նաև կհամապատասխանեցնի ներպետական օրենսդրությունը ՄԻԵԿ-ի, Եվրոպայի Խորհրդի հանձնարարականներով սահմանված սկզբունքների[1] և ոլորտը կարգավորող այլ միջազգային իրավական ակտերի պահանջներին:

Առաջարկի ընդունման դեպքում անձի գործունակության սահմանափակման աստիճանը որոշելիս որպես անձի հոգեկան մակարդակը ստուգող միջոց դատարանը կարող է առաջնորդվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առանձնացված հոգեկան առողջության գնահատման չափանիշներով[2] և անձի հոգեկան բարօրության խաթարման աստիճանը պարզել դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ ստացված հետևյալ հարցերի պատասխաններով.

- արդյո՞ք անձը գիտակցում է ֆիզիկական և հոգեկան ես-ի անընդհատությունն ու ամբողջականությունը,
- նմանատիպ իրադրություններում արդյո՞ք անձը գիտակցում է իր ապրումների անընդհատությունն ու նույնականությունը,
- արդյո՞ք անձի մոտ առկա է քննադատական վերաբերմունք սեփական անձի և գործունեության արդյունքների նկատմամբ,
- արդյո՞ք անձի հոգեկան ռեակցիաները համապատասխանում են միջավայրի ներգործություններին, պայմաններին և իրադրություններին,
- արդյո՞ք անձի մոտ առկա է սոցիալական նորմերին, կանոններին և օրենքներին համապատասխան սեփական վարքագծի ինքնակառավարման կարողություն,
- արդյո՞ք անձի մոտ առկա է սեփական կենսագործունեությունը պլանավորելու և այդ պլաններն իրականացնելու կարողություն,
- արդյո՞ք անձի մոտ առկա է կենսական իրադրությունների փոփոխության դեպքում վարքագիծը փոխելու կարողություն:

Բնականաբար ներկայացված հարցադրումները սպառիչ լինել չեն կարող, սակայն յուրաքանչյուր դեպքում գործը քննող դատարանը կարող է այս և այլ հարցերի

---

[1] Rec (99) 4 հանձնարարականի համաձայն՝ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է: Ուստի յուրաքանչյուր անգամ պետք է հաշվի առնվեն տվյալ անձի կարիքներն ու գործի հանգամանքները: Տե՛ս CoE Rec (99)4, Principle 3:

[2] Տե՛ս http://www.med-practic.com/arm/72/16154:

առաջադրմամբ պարզել հոգեկան հիվանդի անկարողությունների շրջանակն ու նրան անգործունակ ճանաչել՝ բացառապես իր կարիքներին համապատասխան մակարդակում: Այլապես բոլոր այն դեպքերում, երբ անձն ի զորու է որոշակի հարաբերություններում հանդես գալ ինքնուրույն, սակայն մեկ այլ հարաբերություններում ինքնուրույն հանդես գալու անկարողության փաստով վերջինիս լրիվ անգործունակ ճանաչելն ու նրա կյանքի բոլոր ոլորտներում որոշումներ կայացնելու իրավասությունը խնամակալին վերապահելն արդեն իսկ քաղաքացու անձնական կյանքի միջամտության դրսևորում են, որն, ինչպես արդեն նշվեց, անթույլատրելի է բոլորի համար հավասարապես:

Այսպիսով, հաշվի առնելով ներկայումս միջազգային իրավական ակտերում տարածում գտած՝ անձանց իրավունքների սահմանափակման ծավալի հստակեցման պահանջն ու ՀՀ-ում անձի իրավունքների համակողմանի պաշտպանության ապահովման սահմանադրական միտումները, լիահույս ենք, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց գործունակության մասնակի սահմանափակման օրենսդրական մեխանիզմի ներդրումը կբացառի անգործունակ ճանաչվածի անձնական կյանքին անհարկի միջամտության հնարավորությունը և կազատի խնամակալներին ավելորդ ծանրաբեռնումից:

НЕКОТОРЫЕ СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРИЗНАНИЯ ЛИЦА НЕДЕЕСПОСОБНЫМ В ГРАЖДАНСКОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА

Наира Аветисян
Эксперт Юридической клиники ЕГУ

Статья посвящена проблеме института признания лица недееспособным в гражданском праве РА. В частности были рассмотрены условия возникновения и обеспечения полной дееспособности лиц, предусмотренные Гражданским кодексом РА, а также практика лишения человека его дееспособности в Республике Армения. Опираясь на анализ внутренних и международных правовых актов, было предложено предусмотреть законодательством РА возможность частичного ограничения дееспособности и определить критерии оценки психического здоровья человека.

SOME RELEVANT ISSUES CONCERNING TO THE RECOGNITION OF A PERSON AS LEGALLY INCAPABLE IN THE CIVIL LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Naira Avetisyan
Expert at the YSU Legal Clinic

The following article covers the issue of recognizing a person legally incapable in the RA Civil Law. Full capacity acquisition of a person and all the defending provisions by the Civil Code of RA, as well as the present experience in RA on deprivation of capacity have been specifically observed. Having the analysis of Domestic and International legal acts as a basis it is offered to provide partial suspension of capacity and create mental health measuring criteria upon the RA Legislation.

Բանալի բառեր- *իրավունակություն, լրիվ անգործունակություն, գործունակության մասնակի սահմանափակում, հոգեկան առողջություն, անձնական կյանքի իրավունք, հոգեկան առողջության գնահատման չափանիշներ:*
Ключевые слова- *правоспособность, полная недееспособность, частичное ограничение дееспособности, психическое здоровье, право на частную жизнь, критерии оценки психического здоровья.*
Key words- *Legal capacity, full incapability, partial suspension of capacity, mental health, the right to private life, mental health measuring criteria.*